


Տարեկան գին Կ. Վոլոյ 8 ՄԷՏ.
Վ. Գաւառաց 10 ՄԷՏ.
Վ. Եղեմեան 4 ՄԷՏ.
Վ. Գաւառաց 5 ՄԷՏ.
Կառավարութեան թերթի գին 60 փր.
Կառավարութեան տողը մէկ անգամի հա-
մար 2 զուրուշ, երկու անգամի հա-
մար 2 զուրուշ, աւելի անգամներու
համար զատ անկարգութիւն կը լինայ:



ՄԱՐԿԻՐ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ՏՆՏԵՍԱԿԱՆ

ԿԱՌԱՐԱՆՈՒԹՅՈՒՆ 11 ԱՊՐԻԼ

ՔԱՂԱՔԱԿԱՆ

Գաղղիոյ պաշտօնական լրագիրը Ռոյթթօրի և ուրիշ հինգ արտօրերոց փախչելուն լուրը հետեւեալ կերպիւ կը հաստատէ:

«Կառավարութիւնը Նոյմէյքէն ապրիլ 2 և Սիւնէյքէն ապրիլ 8 թը-
ւով հեռագրաւորութեամբ տուաւ երեք
պարզ քաղաքներու և երեք ալ բեր-
դարդ երկրներու գաղտնագրութեան
փախտանքի միտք, որոց մէջ են Ռոյ-
թթօր, Բասթալ Նիւսէ, Գաւառ և Պա-
րիս: Հեռագրաւորութեամբ միւս երկու
փախտանքի անուններն որոշ կերպիւ
չեն ծանուցաներ:

«Այս գաղտնագրութեան Նոյ-
մէյքէն Աւսթրալիա դնացող անգղիա-
կան նաւով մը փախած և Սիւնէյ
հասած են:

«Այս լուրն այս առաւօտ Լոնտոն-
յէն ալ եկաւ, ուր Անգղիոյ կառա-
վարութիւնը Լոնտոնի Գաղղիական
դեսպանին հաղորդած է:

«Նոր Գաղղիոյ կառավարիչն
այս փախտանքի ժամանակ երկիրը
պարտեալ եղած ըլլալով վերադար-
ձին քննութիւն մ'ընել սկսեց է:

«Չինուորական ատենին ալ ար-
դէն սկսած է այս դործին քննու-
թեանն զբաղիլ:

«Առաջին զրոյցներն երեւան ել-
նելուն պէս՝ ծովային դործոց նախա-
րարը զինուորական հրամանատար
մ'ընաբեց, որպէս զի հարկ եղած իշ-
խանութեամբ Նոր Գաղղիոյ եր-
կրք և պաշտօնի ծանր իրողութեան
մը պահանջած անօրէնութիւններն
ընէ:»

«Թիէրի ծննդեան եօթնամասուն
և եօթներորդ տարեկարձը խիստ
փառաւոր կերպիւ քօնեցաւ ֆարիդի
մէջ:

«Մեծանուն քաղաքագէտը շատ
քաղաքներէ շնորհաւորութեան ու-
ղերձներ տաացաւ, բաղմամբիւ մե-
ծամեծ մարդիկ այցելութիւն տուին
իրեն, և անթիւ մարդիկ ալ իր օթե-
ւան երթալով անունին արձանագ-
րեցին:

«Գաղղիոյ փրկութեան համար այն-
չափ աշխատութիւն տուող մեծահա-
մար և բաղմամբիւ ծերունայն ցոյց
տրուած երախտագիտական համակ-
րութիւնն ու մեծարանքը՝ մէկ կող-
մանէ արժանի վարձատրութիւն մ'է
անոր հայրենասիրական ծառայու-
թեանց, և միւս կողմանէ դատա-
պարտութիւն անոր թշնամեաց:

«Խաղիկ կառավարութիւնը պատ-
ժական նոր օրինակի մը պատրաս-

տած ըլլալով, ծերակուտի ժողովն իր
մէջէն յանձնաժողով մը կազմած և
անոր քննութեան յանձնած է: Յիշ-
եալ յանձնաժողովին մէջ մահուան
պատժոյ խնդիրն յաջուելով, տասն
անգամայն հինգը զայն շնչեղ և չոր-
սըն ալ պահելու քուէ տուին: Իսկ
տասներորդը՝ Պ. Միրապէլի, մահուան
պատժոյն դնէ առ այժմ վերնալն
անհնար դատելով հանդերձ, առա-
ջարկեց որ պատժական օրինակի
մէջէն տեսականապէս վերնայ, բայց
առժամանակեայ օրէնքով մը դործ-
նականապէս պահուի և ի դործ դըր-
ւի միայն խաղիկ այն երկիրներուն
մէջ՝ ուր տակաւին հարկաւոր է:

«Կը կարծուի որ այս առաջարկու-
թիւնը մեծադոյն մաս պիտի դնէ ոչ
միայն յանձնաժողովին այլ և ծերա-
կուտին մէջ:

«Անգղիոյ արեւելեան գաւառաց
մէջ հոգային վարձակալաց և մշակաց
վէճն այս օրերս մեծնալով՝ երկուդա-
լի կերպարանք մ'առած է:

«Երկու կողմէն ալ զիջում յանձն չեն
առնուր, մասնաւոր վարձակալները,
և այս յամառութեան հետեւանքն է
երկրագործ ժողովրդոց Անգղիոյ եր-
կիրը թողլով ուրիշ այնպիսի երկր-
ներ գաղթելը, ուր աշխատութիւնն
աւելի թեթեւ, և կենաց նիւթական
պայմաններն աւելի դիւրին են:

«Այս շարժումը, կըսէ Տէյլը Նիւս
լրագիրը, օր քան զօր կընդարձակի,
և Անգղիոյ արեւելեան գաւառաց
աղաղային համար վտանգաւոր կեր-
պարանք մը կ'առնու:

«Վերջին օրերս երկու երեք հա-
զար մշակ նիւսարքէթ քաղաքին
շրջակայներէն խումբ խումբ քաղա-
քը դիմելով, առանց բռնական դործ
մ'ընելու ի ժողով (միթինկ) դուա-
րեցան, և Նոր Չէլանտա գաղթական
զրկելու պաշտօն ունեցող Պ. Տիւն-
քան անուն դործակալ մ'ատենաբա-
նութիւն մ'ըրաւ, որոյ մէջ Անգղիոյ
երկրագործ մշակներուն թշնամու
կեանքը, Նոր Չէլանտայի երկրագործ
ժողովրդոց երջանիկ կենաց հետ բաղ-
տատեց: Այս ատենաբանութիւնը
մեծ աղբեղութիւն ըրաւ մշակներուն
վրայ, և տարակոյտ չկայ պիտի միտ-
կան արդիւնք պիտի ունենայ:

«Նոյն միջոցին վարձակալներն ալ
ժողով մ'ընելով օրոշեցին բնաւ դի-
ջում չընել և իրենց ընթացքը չը
փոխել:»

ՎԵՐՋԻՆ ԼՈՒՐԵՐ

Վիկտոր 20 ապրիլ
Պորտլին մէջ արժեքներն ընդհանրա-
պէս կը բարձրանան: Շատ գնողներ և
զան այսօր:

Լոնտոն 20 ապրիլ
Եւրոմայի հաշուեցոյցին վրայ բացուած

վիճարանութեան մէջ հակառակող չգըտ-
նուեցաւ:

«Ընդհանրապէս կը կարծուի որ շնդ-
կատանի սովն սիրովեւ համար հինգ
միլիոն լիւրա պիտի բաւէ:

Փարիզ 20 ապրիլ.
Եօթնամեայ իշխանութեան դէմ մի-
արանող երեսփոխանաց թիւը 570ի հա-
սած է:

Պէրն 20 ապրիլ.
Յոգովորդեան ժողովը կղերին ընդդի-
մութեան հակառակ սահմանադրութեան
վերադննդութիւնն ընդունեց:

Կանթանտեր 20 ապրիլ.
Սերբանո մարաշախտը Պիլզաօի կա-
ռավարչէն լուր տուաւ թէ քաղաքին մէջ
դռնուած պոպոլը մինչև մայիս 10 կը
բաւէ: Մարաշախտը Քարուսեանց զիծե-
րուն դէմ յարձակումը շարժում մէջ պի-
տի սկսիլ:

Քարուսեանց հետ դաշնագրութիւն
մը կնքելու և Տոն Ա. Ֆոնսը թագաւոր
հրատարակելու զրոյցները բացարձակա-
պէս սուտ կը հանուին:

Աթէնք 20 ապրիլ.
Արամաղղայ տաճարին տերակներուն
բոլորքը խուզարկութիւններ ընելու
համար պայմանագրութիւն մը կնքուե-
ցաւ դերմանացի դիւանոց հետ: Գտնուե-
լիք հնութիւններն Յունաստանի սեփա-
կանութիւն պիտի մնան:

Պէրլին 21 ապրիլ.
Կայսրն այսօր երկու ժողովոց պատ-
գամաւորութիւններն ընդունելով նա-
խագահաց ուղերձներուն պատասխա-
ներու առթիւ ըսաւ. «Քերէլ տէրութեանց
հետ մեր յարաբերութեանց յաջող վի-
ճակն այսպէս չէ. ընդհանրապէս խա-
ղաղութեան նոր և թանկագին երաշխա-
ւորութիւնք աւելցած են առաջիններուն
վրայ: Խաղաղութեան հաստատ պահուիլը
կառավարութեան էական դործը պիտի
ըլլայ: Չինուորական ծախսոց հաշուեցոյ-
ցին մէջ՝ կառավարութիւնը տէրութեան
դանձուն դրամական վիճակը նկատողու-
թեան տուաւ և իր պահանջները խիստ
անհրաժեշտ եղածին վրայ ամփոփեց:

Ստոքոլմ 21 ապրիլ.
Քարուսեանց դիմելուն դէմ կրակը
նորէն սկսաւ: Վճարական ճակատամարտ
մ'անհրաժեշտ է: Սերբանո մարաշախտն
Ապրամաղղայի կողմէն պիտի յարձակին:
Ապրամաղղայի կողմէն պիտի յարձակին:

Բելթա 21 ապրիլ.
Յոգովորդ պատգամաւորութիւնները
կայսրն ներկայանալով, նախագահներն
իրենց բանախօսութեան մէջ ծախսոց
խնայողութեան վրայ շեշտեցին:

Փարիզ 21 ապրիլ.
Նանսիէն կը գրեն թէ այս քաղաքին
Եւրոպոյան անցեալ տարուան յուլիս ամ-
սոյ մէջ հրատարակած մէկ կոնդակին
պատճառաւ եւամեայ բանտարկութեան
դատապարտեցաւ Սալէրիի Գերմանական
ատենանէն:

Լոնտոն 21 ապրիլ

Ռոմ	Քոնս.	41
Փոն	4863	62 1/2
»	4869	50
»	4871	57 1/2
»	4872	68 1/2
Անգլ	Քոնս.	92 15/16

ՊԱՅՄԱՆՔ

Ինչու զացած լրագրաց ճանդ ու
ծախքը խմբագրութեան վրայ է:
Լրագրոյս վերաբերեալ նամակ
կամ որ եւ իցէ գրութիւն խմբագիր
— Տնօրէնին պիտի ուղղուի, և Պո-
լիս, Չինիլի խան, Մարտի գրասեն-
եակը:
Ճամբու ծախքը չվճարուած նա-
մակ չընդունուիր:

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Վեհախառ Սուլթանն այլ և այլ
կարգի Մէճիլիէ պատուանշաններ
տուաւ հելլենական դեսպանատան
պաշտօնէից:

Թուրքերէն Շարք լրագիրն իր
վերջին մէկ յօդուածին պատճառաւ
անհաճման կերպիւ դադարեցաւ:

Նմանապէս Մէճիլիէ չափափո
լրագիրը՝ կաթոլիկ Հայոց խնդրոյն
վրայ ըրած հրատարակութեանց, և
Մամուլ անուն խայտառակ թերթին
ալ իր լրբերին հրատարակութեանց
պատճառաւ՝ մէկ մէկ ամիս դադարե-
ցան:

Սերվիյ Միլանո իշխանն յառա-
ջիկայ չորեքշաբթի օրը Կ. Պոլիս կըս-
պատուի:

Յունական Նեօլոյս լրագիրն անց-
եալ շաբթու Բեթլէհէմի մէջ Լատին
ուխտաւորաց տեղական իշխանու-
թեան դէմ ըրած մէկ յարձակումը
ծանուցած էր:

Լա թիւրքի լրագիրը կը հաստա-
տէ այս լուրը հետեւեալ տեղեկու-
թիւններով, զորս երեսուդէմէն իր
թղթակիցը գրած է:

«Լատինաց փանքը քանի մը տա-
րիէ ի վեր սովորութիւն ըրած է
Ձատիկ տօնէն ետեւ ուխտագնացու-
թիւն կազմել ի Յորդանան: Եւրո-
պոյի ուխտաւորները, Լատին կրօ-
նաւորներ և քանի մ'ալ տեղացի
կաթոլիկներ՝ այս ուխտագնացու-
թեանց կը մասնակցին, և վերադար-
ձին ուղղակի Բեթլէհէմ կըրթան և
Ծննդեան այրին մէջ դոհարանական
աղօթքի մ'երգեցմանը ներկայ կը
գտնուին:

«Այս տարի օտար ուխտաւորք
աւելի շատ էին, և զանազան կաթոլիկ
աղբերէ երկու հարիւրի չափ մար-
դիկ եկած էին:

«Ասանք երբոր Յորդանանի ուխ-
տագնացութեանն դառնալով Բեթ-
լէհէմի մօտեցան, Լատինաց փանքին
կրօնաւորներն զգաւաւորեալ և
գրօշակներ պարզած՝ դիմաւորեցին,
և Բեթլէհէմի եկեղեցւոյն երկաթի
դռնէն Ծննդեան այրը տանելու դե-
ցին թափաղակով:

«Կառավարութեան զինուորները,
որ տարիէ մ'ի վեր պահպանութիւն
կընեն Բեթլէհէմի եկեղեցւոյն մէջ,
դիտողութիւն ըրին Եւրոպոյի ուխ-
տաւորաց կարաւանին թէ՛ Լատին
կղերը նախատեսեալ պարագաներու
մէջ՝ այն է յուղարկաւորութեան
կամ ամուսնական պաակի առիթնե-
րու մէջ միայն իրաւունք ունէին եր-
կաթի դռնէն թափաղակով ներս մըտ-
նելու, բայց այս պարագային մէջ
պէտք էր որ Լատինաց փանքին դըռ-

